



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝

«Տոկոսներ» թեմայի և ֆինանսական կրթության ուսումնասիրման առանձնահատկությունները 6-րդ դասարանի մաթեմատիկայի դասապրոցեսում

ԱՌԱՐԿԱ՝

Մաթեմատիկա

ՀԵՂԻՆԱԿ՝

Լարիսա Թամազյան

ՄԱՐԶ՝

Լոռի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝

Ալավերդու Մ.Թանդիլյանի անվան համար 10 հիմնական դպրոց

Բովանդակություն

Ներածություն	3
«Տոկոսներ » թեմայի և ֆինանսական կրթության ուսումնասիրման առանձնահատկությունները.....	5
Եզրակացություն.....	14
Գրականություն	15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ներկայիս գերարագ զարգացող դարաշրջանում անհերքելի է դարձել ժամանակի արդյունավետ օգտագործման կարևորությունը, հասարակության և տեխնոլոգիաների գերարագ զարգացմանը համընթաց քայլերը, համապատասխան գիտելիքներով ու հմտություններով զինված լինելը, կրթությունն առավել պրակտիկ դարձնելն ու դեռևս դպրոցում սովորողներին դպրոցի պատերից դուրս կյանքին նախապատրաստելը: Չափազանց կարևոր է նշել, թե օրեցօր որքան ակնհայտ է դառնում ֆինանսական կրթության ապահովումը դպրոցներում: Ֆինանսապես կրթված լինելը հիմնավոր հմտություն է ժամանակակից հասարակության մեջ մասնակցություն ունենալու համար: Երեխաները մեծանում են չափազանց արագ փոփոխվող ու բարդ աշխարհում, որտեղ նրանք վաղ թե ուշ պետք է ստանձնեն իրենց կյանքը և ֆինանսական միջոցները տնօրինումը: Այսօրվա դպրոցականները, որպես մեր հայրենիքի վաղվա ապագա երիտասարդներ պետք է սովորեն ճիշտ, ավելի հասուն ու լուրջ որոշումներ կայացնել, ինչպիսիք են վարկային գործարքներ, ներդրումներ, խնայումներ, ապահովագրական վճարներ կատարելը և այլն: Ակնհայտ է, որ այստեղ լավ մաթեմատիկական գիտելիքները չեն կարող մեծ դեր չխաղալ: Շատ հաճախ կարող ենք սովորողներից լսել հարցեր կապված դպրոցում ուսուցանվող առարկաների և դրանց ներառած թեմաների կարևորության, գործնականության և առօրյա կյանքում ստացած գիտելիքը կիրառելու վերաբերյալ: Աշխատանքում կփորձենք ցույց տալ, թե որքան գործնական գիտելիքներ են ստանում սովորողները՝ ուսումնասիրելով «Տոկոսներ» թեման, և որքան է վերջինիս լավ տիրապետելը կարևոր, առանց այն էլ, շատ մեծ կարևորություն ունեցող ֆինանսական կրթության մեջ:

Հեղազոտության նպատակը:

Ցույց տալ, թե ինչպես կարելի է համատեղել ֆինանսական կրթությունը 6-րդ դասարանի մաթեմատիկայի դասաժամին՝ «Տոկոսներ» թեմայի հետ:

Հեղազոտության խնդիրներ:

- Բացահայտել «Տոկոսներ և ֆինանսական կրթությունը դպրոցում» թեմայի ուսուցման արդյունավետ ուղիները:

- Խնդիրների լուծում (մասերի, տոկոսների, գնումների վերաբերյալ)
- Դասի պլանի օրինակով ցույց տալ ֆինանսական կրթության մաթեմատիկայի դասաժամի հետ համատեղման արդյունավետությունը:

«Տոկոսներ » թեմայի և ֆինանսական կրթության ուսումնասիրման առանձնահատկությունները

Անկախ մարդկային գործունեության ոլորտից մարդկանց անհրաժեշտ են տրամաբանորեն մտածելու կարողություն, փաստարկները ճիշտ և հետևողականորեն կառուցելու, մտքերը ճշգրիտ և պարզ արտահայտելու ունակություններ, իրավիճակը քննադատաբար գնահատելու, վերլուծելու, կարևորն ու երկրորդականը զանազանելու, անջատ փաստերը համադրելու, ընդհանրացումներ անելու հմտություններ: Բոլոր այդ կարողություններն ու հմտություններն առաջին հերթին և առավելապես ձևավորվում ու զարգանում են մաթեմատիկա ուսումնասիրելու միջոցով:

Կարող ենք եզրակացնել, որ մաթեմատիկական գիտելիքները կարևոր դեր ունի մեր առօրյա կյանքում, մասնավորապես մեր ֆինանսական միջոցների կառավարման հարցում: Մաթեմատիկայի և ֆինանսական կրթության կապը ավելի քան պարզ է: Տարրական թվաբանությունն օգտագործվում է ամենօրյա ֆինանսական որոշումների կայացման ժամանակ: Դրանք ներառում են ամեն ինչ՝ սկսած գների համեմատությունից մինչև ավելի բարդ խնդիրներ, ինչպիսիք են բյուջետավորումը, հարկերի վճարումը և տոկոսադրույքների հաշվարկը: Հարվարդի բիզնես դպրոցի ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ հասուն մարդկանց մոտ մաթեմատիկայի լրացուցիչ ուսուցումը հանգեցնում է ավելի մեծ ներդրումային եկամուտների ստացման և ավելի լավ վարկային կառավարման արդյունքի: [10] Նմանապես, Միացյալ Թագավորության Money Advice Service-ի զեկույցը ցույց է տվել, որ փողի կառավարման բարելավմանը հանգեցնող ամենակարևոր գործոնները թվաբանության բազային հմտություններն են (թվերը հասկանալը) և թվերի նկատմամբ հուզական վերաբերմունքը (մտածելակերպը և թվերը օգտագործելու վստահությունը): Ակնհայտ է, որ մաթեմատիկայի ամուր հիմքը կարող է հանգեցնել ֆինանսական գրագիտության ավելի բարձր աստիճանի:

Ֆինանսական որոշումներ կայացնելը պահանջում է մի շարք հաշվարկներ կատարել, որոշ դեպքերում բավականին բարդ: Ֆինանսական ռեսուրսների կառավարման համար անհրաժեշտ հիմնական հմտություններից մեկը բազային

մաթեմատիկական հաշվարկներ կատարելու ունակությունն է, օրինակ՝ տոկոսները: Աշխարհում բազմաթիվ ուսումնասիրություններ ցույց են տվել, որ ֆինանսական գրագիտության ցածր մակարդակ կա բոլոր տարիքի մարդկանց շրջանում: Երիտասարդները բախվում են բազմաթիվ ֆինանսական որոշումներ կայացնելու հետ, և այս որոշումները կայացնելու համար անբավարար պատրաստվածություն ունեն ֆինանսական գրագիտության բացակայության պատճառով: Ֆինանսական գրագիտության բացակայությունն այդ դեպքում կարող է հանգեցնել անցանկալի արդյունքների, օրինակ՝ մեծ պարտքեր, վարկի չմարում և անձնական սնանկություն:[3;1-2]

Տոկոսային փոփոխությունը հասկանալն այն մաթեմատիկական հիմունքներից մեկն է, որը հաճախ նշվում է ֆինանսական գրագիտության քննարկումներում: Money Advice Service-ի 2015 թվականի սկզբնական զեկույցում այն օգտագործվել է որպես հիմնական միջոց՝ հարցման մասնակիցներին խնդրելով ասել, թե որքան կլինի խնայողական հաշվում մեկ տարի հետո, եթե սկզբում 100 ֆունտ ստերլինգ լինի հաշվին տարեկան 2 տոկոսադրույքով: Մեկ երրորդից ավելին չի կարողացել ճիշտ պատասխանել այս հարցին: [8]

Որոշ երկրներում ֆինանսական կրթությունը դպրոցում պարտադիր է դարձել: Դպրոցները օրենսդրությամբ պարտավորվում են այն ներառել դասապրոցեսում: ԱՄՆ-ի շատ նահանգներում պարտադիր է առնվազն գոնե մեկ կիսամյակ ֆինանսական կրթություն ուսումնասիրել դպրոցում կամ անձնական ֆինանսների կառավարումը ներառվի այլ առարկաների դասավանդման գործընթացում: Որոշ նահանգներ չունեն այս պարտադիր պայմանը, սակայն անձնական ֆինանսների դասընթացը այնուամենայնիվ ներառված է դպրոցական ծրագրում:

Կանադայում ֆինանսական կրթությունը պարտադիր է Բրիտանական Կոլումբիայում՝ որպես կյանքի հմտությունների դասընթացի մաս: Հյուսիսային Իռլանդիայում ֆինանսական կրթությունը պարտադիր է հիմնական դպրոցում որպես մաթեմատիկայի և հանրահաշվի մի մաս: Ուելսում ֆինանսական կրթությունը պարտադիր է բոլոր 7-16 տարեկան աշակերտների համար: Տարբեր երկրներում ֆինանսական կրթության դասավանդման չափը տարբեր է: Որոշ երկրներում

կառավարությունը խրախուսում է այն ներառել կրթական ծրագրերում և տրամադրում է ուղղորդում: [11]

2015 թվականից ՀՀ-ում ֆինանսական կրթման ազգային ռազմավարության (ՖԿԱՌ) ներքո մեկնարկել է «Ֆինանսական կրթությունը դպրոցում» ծրագիրը, որի նպատակն է սովորողների շրջանում ձևավորել անհրաժեշտ նվազագույն ֆինանսական գիտելիք, հմտություններ և վերաբերմունք՝ խթանելով պատասխանատու ֆինանսական որոշումների կայացումը: Նախատեսված է ֆինանսական կրթության բաղադրիչը ինտեգրել հետևյալ 4 առարկաներում՝

- Ես և շրջակա աշխարհը (2-ից 4-րդ դասարաններ)
- Մաթեմատիկա (2-ից 6-րդ դասարաններ)
- Հասարակագիտություն (8-ից 11-րդ դասարաններ)
- Հանրահաշիվ (7-ից 11-րդ դասարաններ): [14]

Ֆինանսական կրթությունը ներառում է 7 թեմատիկ ոլորտ.

1. Ընդհանուր տնտեսական հասկացությունների տիրապետում
2. Անձնական բյուջեի կառավարում
3. Խնայողություններ և երկարաժամկետ պլանավորում
4. Պարտքերի կառավարում
5. Ֆինանսական ծառայությունների արդյունավետ ընտրություն
6. Իրավունքների պաշտպանություն անձնական ֆինանսների ոլորտում
7. Ֆինանսական անվտանգություն (խարդախություններ և զեղծարարություններ): [14]

Մաթեմատիկայի դպրոցական դասընթացում ֆինանսական կրթության ինտեգրման հիմնական նպատակն է նպաստել ֆինանսապես գրագետ անձի ձևավորմանը, անձ, ով ունի այնպիսի գիտելիքներ, հմտություններ և մշակույթ, որոնք նրան հնարավորություն են տալիս լինելու տեղեկացված, իր անձնական ֆինանսների վերաբերյալ կայացնելու պատասխանատու որոշումներ, ձեռնարկելու իրավիճակին համապատասխան ճիշտ գործողություններ: Անձնական ֆինանսների վերաբերյալ որոշումներ կայացնելու և իրավիճակին համապատասխան գործողություններ ձեռնարկելու համար անձից պահանջվում է որոշակի ինքնավստահություն, իսկ վերջինս կարող է դրսևորվել միայն հիմնավոր

հաշվարկների ու համակողմանի վերլուծությունների առկայության դեպքում: Եվ հենց դա է հանգուցային այն խնդիրը, որի շուրջ միավորվում են մաթեմատիկական և ֆինանսական կրթությունները: Մաթեմատիկական կրթության բովանդակության մեջ ֆինանսական բովանդակությամբ հարցերի ներառումը նպաստակ ունի, մյուս կողմից, բարենպաստ ներգործություն ունենալու «Մաթեմատիկա» ուսումնական բնագավառի կրթական խնդիրների արդյունավետ լուծման վրա: Մաթեմատիկական գրագիտություն ունենալու առանցքային կոմպետենցիան ենթադրում է կյանքի տարբեր իրադրություններ ներկայացնող համատեքստում մաթեմատիկական գիտելիքներ ու մեթոդներ կիրառելու կարողություն: [1;14]

Ֆինանսական կրթության ներառումը մաթեմատիկայի դասապրոցեսում օգնում է սովորողներին ուսումնական ակտիվ աշխատանքի մեջ ներգրավելուն և նրանց հետաքրքրվածությունը բարձրացնելուն, բարձրանում է մաթեմատիկայի ուսուցման գործնականությունը:

Ֆինանսական կրթության ներառումը մաթեմատիկայի դասապրոցեսում նպաստում է սովորողի այնպիսի որակների ձևավորմանը, որոնց շնորհիվ նա կկարողանա իր գիտելիքներն ու հմտությունները օգտագործել անձնական և ընտանեկան բյուջեի արդյունավետ կառավարման, խնայելու, պարտքերի կառավարման, գնումների իրականացման, ֆինանսական ծառայություններից օգտվելու մեջ:

Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում ֆինանսական կրթության ինտեգրումը պետք է ավելորդ ծանրաբեռնվածություն չառաջացնի սովորողների համար, դասավանդման տեսանկյունից լինի հետաքրքիր և դյուրըմբռնելի: Անհրաժեշտ է ֆինանսների վերաբերյալ տեղեկատվությունը մատուցել փոքր չափաբաժիններով, ներկայացնել պարզ, մատչելի և գրավիչ ձևերով՝ խուսափելով տվյալ տարիքի երեխայի կյանքին չառնչվող տեղեկատվություն հաղորդելու գայթակղությունից: Ուսուցման գործընթացն իրականացվելու է դիդակտիկայի սկզբունքների հիման վրա, ընդ որում՝ դասի ընթացքում ֆինանսական խնդիրներին անդրադառնալիս պետք է հատուկ առանձնացումներ և «աչքի ընկնող» շեշտադրումներ կատարելուց հնարավորինս խուսափել: Մաթեմատիկական նյութի բովանդակության մեջ ֆինանսներին վերաբերող նյութը ներառվելու և

ներկայացվելու է այնքան սահուն և ներդաշնակ, որ դրանք չդիտվեն որպես տարբեր բաղադրիչներ, որոնք արհեստականորեն միավորվել են մի դասի մեջ: [1;16-17]

Ինչպես արդեն նշեցինք վերևում, ֆինանսական կրթությունը փոքր չափով ուսումնասիրվում է 6-րդ դասարանի մաթեմատիկայի շրջանակներում՝ տոկոսներ թեմայի մեջ: Ստորև կներկայացնենք համապատասխան թեմայի շրջանակներում դասի պլան:

Դասի պլան

Դասարան՝ 6-րդ

Դասի թեման՝

1. Խնդիրներ տոկոսի վերաբերյալ
2. Ֆինանսական կրթություն՝

Դասի նպատակը՝

1. Ձևավորել գիտելիքներ և կարողություններ տոկոսի, նրա հիմնական խնդիրների և կիրառությունների վերաբերյալ:
2. Ստացած գիտելիքները կիրառել առօրյա կյանքում:

Ակնկալվող արդյունք՝

- Աշակերտը սովորի՝ ինչ է տոկոսը, ինչպես գտնել տրված թվի տոկոսը, կարողանա տոկոսները գրել մասի տեսքով, մասն արտահայտել տոկոսներով:
- Կարողանա լուծել խնդիրներ տոկոսի վերաբերյալ:
- Գործողություններ կատարելու միջոցով կարողանա հաշվել ստացված եկամուտները:
- Կարողանա կատարել խնայողություն:

Մեթոդ՝ մտազրոհ

Դասի ընթացքը՝

Մտազրոհի մեթոդով թեմայից ստացած գիտելիքները ամրապնդելու համար պատասխանել հետևյալ հարցերին՝

1. Ի՞նչ է տոկոսը:
2. Ինչպե՞ս գտնել տրված թվի տոկոսը:
3. Ինչպե՞ս տոկոսները գրել մասի տեսքով և մասն արտահայտել տոկոսներով:

4. Ի՞նչ է խնայողությունը:

Դասարանի աշխատանքային կանոններ

- Լսել բոլորի կարծիքները
- Բոլոր սովորողներին ներգրավել դասապրոցեսում
- Յուրաքանչյուր արտահայտված միտք արժանացնել խրախուսման

Ընթացքը՝

Սովորողները նախորդ դասաժամին սովորել էին խնայողությունների մասին, որ աշխատավարձի 10 տոկոսն անհրաժեշտ է խնայել, այնուհետև նրանց հանձնարարվել էր, որպեսզի յուրաքանչյուրն իր ընտանիքի բյուջեի և խնայողությունների մասին որոշակի տեղեկություններ հավաքի (ոչ ճշգրիտ և մանրամասն՝ գաղտնիության պահպանման համար): Դասի սկզբում յուրաքանչյուրը ներկայացրեց իր տնային հանձնարարությունը, կազմակերպվեց քննարկում: Մտագրոհի մեթոդի օգտագործմամբ ուսուցիչը թեմայի վերաբերյալ հարցեր առաջադրեց: Այնուհետև անցան դասի հաջորդ փուլին:

Ուսուցիչը սովորողներին բաժանեց 2 խմբի: 1-ին խմբին հանձնարվեց թվի մասը գտնելու վերաբերյալ խնդիր:

Խնդիր 1: 2 քաղաքների հեռավորությունը 80կմ է: Հեծանվորդն անցել է այդ հեռավորության 4/5-ը: Քանի՞ կիլոմետր է անցել հեծանվորդը:

2-րդ խմբին հանձնարարվեց թիվը գտնելու խնդիրը՝ նրա մասով:

Խնդիր 2: Վարել են դաշտի 5/8-ը , որը 160 հա է: Գտնել ամբողջ դաշտի մակերեսը: Խնդիրների լուծման համար տրվեց 5-6 թուպե: [2;28]

Առաջադրանքը կատարելուց հետո խմբերը փոխանակեցին լուծումները, որպեսզի խմբերը ստուգեն միմյանց աշխատանքները, կարծիքներ հայտնեն:

Յուրաքանչյուր խումբ ներկայացրեց իր աշխատանքը՝ պատասխանելով մյուս խմբի հարցերին:

Խնդիր 1-ի լուծում

A-ճանապարհ =80կմ

B-հեծանվորդի անցած ճանապարհ

$m/n=4/5$

Հեծանվորդի անցած ճանապարհը հաշվելու համար կիրառում ենք թվի մասը գտնելու բանաձևը՝ $B=A \cdot m/n$:

$$B=4/5 \cdot 80=64 \text{ կմ}$$

Պատ.՝ 64 կմ:

խնդիր 2 լուծում

$$B=160 \text{ կմ (Վարած դաշտ)}$$

$$m/n=5/8$$

A-ամբողջ դաշտ

Օգտվելով թիվը նրա մասով գտնելու բանաձևից՝

$$A=B \cdot n/m$$

$$A=160 \cdot 8/5=256 \text{ կմ}$$

Պատ.՝ 256 կմ:

Պարզագույն խնդիրները լուծելուց հետո խմբերին առաջադրվեց լուծել տոկոսներով խնդիրներ (գնումների վերաբերյալ):

խնդիր 1

Տարվա ընթացքում ծառայության որակը բարելավելու պատճառով, գնացքով երթևեկության գինը բարձրացավ՝ սկզբում 20% - ով, իսկ հետո՝ նոր գինը 15% - ով:

Տարվա ընթացքում քանի՞ տոկոսով բարձրացավ երթևեկության գինը:

Լուծում՝

Երթևեկության սկզբնական գինը ընդունենք 100 միավոր:

Գինը 20% - ով բարձրանալուց հետո կդառնա $100 + 20 = 120$ միավոր:

Նոր գինը 15% - ով բարձրանալուց հետո կդառնա՝ $120 + 120 \cdot 15/100 = 138$ միավոր, որը սկզբնական գնից մեծ է 38% - ով:

Ուրեմն տարվա ընթացքում երթևեկության գինը բարձրացավ 38% - ով:

խնդիր 2

Համազգեստի գինը 12 000 դրամ էր: Մայիսին նրա գինը բարձրացավ 5%-ով, իսկ հունիսին՝ իջավ 10%-ով: Որքա՞ն դարձավ համազգեստի գինը հունիսին:

Լուծում՝

Մայիսին համազգեստի գինը կլինի՝ $12000 + 12000 \cdot 5/100 = 12000 \cdot (1 + 5/100) = 12600$ դրամ, իսկ հունիսին համազգեստի գինը կլինի՝

$12600 - 12600 \cdot 10/100 = 12600 \cdot (1 - 10/100) = 11340$ դրամ:

Պատ՝ 11340 դ.:

Խնդիրների լուծումից և քննարկելուց հետո սովորողներին հանձնարարվեց քարտային աշխատանք: Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ է հաշվի առնել, որ բանկում ավանդի նվազագույն գումարը 50 հազար դրամ է: Աշխատանքի կատարման համար սովորողները նորից բաժանվեցին 2 խմբի: 1-ին խմբին հանձնարարվեց հաշվել՝ որքան ժամանակ անց կարող են ունենալ նվազագույն ավանդի համար անհրաժեշտ գումար հաստատուն աշխատավարձի պայմաններում, իսկ մյուս խմբին՝ տարբեր աշխատավարձի չափերի դեպքում՝ նկատի ունենալով, որ պետք է խնայել աշխատավարձի 10%-ը:

1-ին խումբ- Ամսական հաստատուն աշխատավարձ 120.000 դրամ:

Լուծում՝ $120000 \times 10/100 = 12000$ դր.

$50000/12000 = 4.16$

Պատ.՝ առնվազն 5 ամիս:

2-րդ խումբ- Տրված են աշխատավարձի չափերը 12 ամսվա կտրվածքով: Սովորողները պետք է հաշվեն՝ քանի ամիս անց կունենան ավանդի համար անհրաժեշտ գումարը:

1- 68000դր.	7- 80000դր.
2- 73000դր.	8- 110000դր.
3- 85000դր.	9- 135000դր.
4- 102000դր.	10- 89000դր.
5- 124000դր.	11- 89000դր.
6- 91000դր.	12- 110000դր.

Լուծում՝

$$68000 \times 10 / 100 = 6800 \text{ դր.}$$

$$73000 \times 10 / 100 = 7300 \text{ դր.}$$

$$85000 \times 10 / 100 = 8500 \text{ դր.}$$

$$102000 \times 10 / 100 = 10200 \text{ դր.}$$

$$124000 \times 10 / 100 = 12400 \text{ դր.}$$

$$91000 \times 10 / 100 = 9100 \text{ դր.}$$

$$6800 + 7300 + 8500 + 10200 + 12400 + 9100 = 54300 \text{ դր.}$$

Պատ.՝ Առնվազն 6 ամիս

Առաջադրանքների կատարման արդյունքում հասանք վերոնշյալ ակնկալվող արդյունքին:

Տնային աշխատանք

Հանձնարարել սովորողներին շրջել հագուստի խանութներում և գրանցել առնվազն 5 ապրանքատեսակների գներ, որոնք զեղչվել են, կատարել հաշվարկներ, համեմատություն և ներկայացնել, թե որ ապրանքը քանի տոկոսով է զեղչվել՝ ներկայացնելով հին և նոր գները: Բացի այս կարելի է քննարկել նաև սեզոնից կախված փոփոխությունները:

Այնուհետև կատարվեց անդրադարձ՝

- 1. Ի՞նչ դեր ունի մասերով և տոկոսներով խնդիրների լուծումը առօրյա կյանքում:*
- 2. Ձեր կարծիքով ինչու՞ է ապրանքի կամ ծառայության զեղչի/աճի դեպքում կիրառվում տոկոս:*
- 3. Ձեզերից օգտվելը ինչու՞ է շահավետ:*

Գնահատվեցին բոլոր սովորողները՝ յուրաքանչյուրն իր ակտիվության համապատասխան:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հետազոտական աշխատանքի ընթացքում ցույց տվեցինք՝ որքան կարևոր է ֆինանսական կրթության ներառումը մաթեմատիկայի դասընթացի մեջ, որքան կարևոր և անհրաժեշտ է համապատասխան կրթական ծրագրերի մշակումը, ինչ քայլեր են ձեռնարկվում հիմա: Ուսումնասիրեցինք, թե ինչպես կարելի է համատեղել ֆինանսական կրթությունը 6-րդ դասարանի մաթեմատիկայի «Տոկոսներ» թեմայի հետ և եկանք հետևյալ եզրակացություններին.

- 1- Ինչպես կարելի է ապահովել աշակերտների ակտիվությունը, ուշադրությունը և ներգրավվածությունը մաթեմատիկայի դասին:
- 2- Բացահայտեցինք «Տոկոսներ և ֆինանսական կրթությունը դպրոցում» թեմայի ուսուցման արդյունավետ ուղիները:
- 3- Տոկոսների վերաբերյալ խնդիրների լուծման արդյունքում սովորողները ձեռք բերեցին վերլուծական մտածողության, ինքնուրույն աշխատելու կարողություններ:
- 4- Ինչպես ներառել բոլոր սովորողներին դասապրոցեսին և հնարավորություն տալ սեփական մտքերն ու կարծիքներն անկաշկանդ արտահայտել:
- 5- Համոզվել, որ մաթեմատիկայի ուսուցման գործընթացում ֆինանսական կրթության ինտեգրումը ավելորդ ծանրաբեռնվածություն չառաջացնի սովորողների համար և համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին:
- 6- Դասավանդման տեսանկյունից թեման լինի հետաքրքիր և դյուրըմբռնելի, պարզ և մատչելի:
- 7- Տոկոսների կիրառումը թե՛ առօրյա կյանքում, թե՛ ֆինանսական կրթության մեջ կարող է հանգեցնել ճիշտ տնտեսական կանխատեսումների, արդյունավետ հաշվարկների, խնայողությունների և պլանավորման, կարճ ասած, ֆինանսական կրթության բարելավման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հակոբյան Ա. Է., Փոքրիկյան Ա. Լ., Ղազարյան Շ. Մ., Ֆինանսական կրթության մեթոդական ձեռնարկ, Մաթեմատիկա և հանրահաշիվ, Երևան 2019, 240 էջ, [abcfinance.am https://abcfinance.am/images/teachers/Matem.pdf](https://abcfinance.am/images/teachers/Matem.pdf)
2. Նահապետյան Բ. և Աբրահամյան Ա., 6-րդ դասարանի մաթեմատիկայի դասագիրք, Երևան, 2020թ., 223 էջ
3. Jayaraman, J.D, Saigeetha Jambunathan, and Kenneth Counselman. "The Connection between Financial Literacy and Numeracy: A Case Study from India." Numeracy 11, Iss. 2 (2018): Article 5. DOI:, Pages-21 <https://digitalcommons.usf.edu/cgi/viewcontent.cgi?article=1256&context=numeracy>
4. OECD/INFE core competencies framework on financial literacy for youth, 2015
5. OECD, PISA 2012 Results: Students and Money: Financial literacy skills for 21st century (Vol. 6), PISA, OECD Publishing, 2014
6. Shaun Mundy, "Financial Education Programmes in Schools", 2009
7. ՀՀ ԿԳՄՍՆ կայքէջ՝ <https://escs.am/am>
8. FT Financial Literacy and Inclusion Campaign <https://www.ft.com/content/89eca85d-9662-4a4d-9cc1-7b6a295b7ed9>
9. www.fininfo.am
10. <https://www.mathformoney.app/math-for-financial-literacy.html>
11. <https://www.lafinancepourtous.com/IMG/pdf/Mundy-final.pdf>
12. https://www.oecd.org/finance/financial-education/FinEdSchool_web.pdf
13. <https://www.lafinancepourtous.com/IMG/pdf/Mundy-final.pdf>
14. <https://abcfinance.am/ifme/teacher.html>
15. <https://study.com/academy/lesson/applying-financial-literacy-in-math-instruction.html>
16. <https://www.researchgate.net/publication/305776964> Financial Education and Mathematics Education a critical approach <https://escs.am/am/news/8822atics>